ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ----» ---------- 2017թ. N------Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկից «Ռոսիա» հասարակական կազմակերպությանը տրամադրված 36.9 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկից «Ռոսիա» հասարակական կազմակերպությանը տրամադրված 36.9 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը:

Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 28-ի հ.410-Ա որոշման հիման վրա քննարկվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, 2 տարի ժամկետով տրամադրվել էր կազմակերպությանը և վերջինիս հետ կնքվել էր գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի հիման վրա իրավունքը ստացել է պետական գրանցում /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.04122015-01-0207 վկայական/:

«Ռոսիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1993 թվականին, այն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, կամավորության սկզբունքով գործող միավորում է: Միության անդամների քանակը գերազանցում է 5000 և ամբողջ Հայաստանի Հանրապետության տարածքում ունի մասնաճյուղեր:

Կազմակերպության հիմնական նպատակն է ռուս և ռուսալեզու քաղաքացիների ակտիվ ինտեգրումը Հայաստանի հասարակական կյանքին: Գործունեության ուղղություններից է մշակութային, լուսավորչական ծրագրերի իրականացումը, համերգների, միջոցառումների, ցուցահանդեսների, մրցույթների անցկացումը:

Միությունը կազմակերպում է նաև Հայաստանում բնակվող ռուսալեզու քաղաքացիների համար հայերենի դասընթացներ՝ նպաստելով հայոց լեզվի ճանաչմանը: «Ռոսիա» հասարակական կազմակերպությունը մշակում և իրականացնում է նաև սոցիալական ծրագրեր: Միությունը կազմակերպում է նաև միջոցառումներ, որոնց ժամանակ լուսաբանվում են հայոց ցեղասպանության և արցախյան պատերազմի թեմաները:

Հաշվի առնելով կազմակերպության գործունեության ուղղվածությունը, ինչպես նաև համանման դեպքերում հասարակական կազմակերպությունների և միավորումների մասով ձևավորված մոտեցումը, մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ